



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վ Ա Յ Ո Ց Զ Ո Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 262 -Ա

«23» ՆՈՅԵՄԲԵՐ 2023Թ

«ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԱՅՈՑ ԶՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ», ՀՀ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԻ «ՀԵՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2111-Ն որոշումը, «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի և ՀՀ Վայոց ձորի մարզի «Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենների գրությունները և ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական, ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի, ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունների և ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի հիմնավորումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ


1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին պետական բյուջեով հատկացված միջոցների «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածից՝

1.1. 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը տրամադրել «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ բեմի շարժամեխանիզմների ճոպանների փոխման համար:

1.2. 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը տրամադրել «Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ին՝ արևային վահանակների տեղադրման համար:

1.3. 1310000 (մեկ միլիոն երեք հարյուր տաս հազար) ՀՀ դրամ Վայոց ձորի մարզի «Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին՝ ջեռուցման նպատակով էլեկտրամատակարարման եռաֆազ համակարգի տեղադրման համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

 Recoverable Signature


Ստորագրող
Signed by: GREGORYAN ARARAT 1310850550

Գ. Եղեգնաձոր

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ